Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թվականի
հոկտեմբերի 10-ի N 1288 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲՆԱԿԱՆ՝ ՄՇԱԿՎԱԾ ԿԱՄ ՉՄՇԱԿՎԱԾ, ԲԱՅՑ ՉՇՐՋԱՆԱԿՎԱԾ ԿԱՄ ՉԱՄՐԱՑՎԱԾ ԱԼՄԱՍՏՆԵՐԻ (ԱՏԳ ԱԱ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ 710210000, 710221000, 710231000) «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների (ԱՏԳ ԱԱ ծածկագիրը՝ 710210000, 710221000, 710231000) ժամանակավոր ներմուծման գործընթացը՝ «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներմուծելիս մաքսային ձևակերպումների իրականացման պարզեցված ընթացակարգը:

2. Հայտարարատուն «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներմուծման թույլտվություն ստանալու համար թղթային կամ էլեկտրոնային եղանակով մաքսային մարմին ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.

2) հումքի, նյութերի ու կիսաֆաբրիկատների մատակարարման պայմանագրերի կամ ծառայությունների մատուցման պայմանագրերի կամ հաշիվ ապրանքագրերի պատճենները և վերամշակման արդյունքում ստացված ապրանքների արտահանման պայմանագրերի պատճենները.

3) լիազոր մարմնի տրամադրած՝ «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների

նվազագույն քանակության վերաբերյալ եզրակացությունը՝ եթե վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքը չի բավարարում սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն հաստատված վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի տոկոսին.

4) Քիմբերլի գործընթացի հավաստագրի պատճենը:

3. Եթե կատարված տեսակավորման, գծանշման և զննման արդյունքում պարզվում է, որ վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի տոկոսը չի բավարարում սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետին՝ համաձայն հաստատված վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքին, ապա հայտարարատուն լիազոր մարմին է ներկայացնում դիմում 1-ին կետում նշված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի եզրակացություն ստանալու համար:

4. Ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի եզրակացությունը լիազոր մարմնի կողմից տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 27-ի «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն քանակության սահմանման կարգը և «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների և մնացորդների նվազագույն քանակության սահմանման կարգը հաստատելու մասին» N 239 որոշմամբ սահմանված ընթացակարգին համաձայն:

5. Եթե Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 27-ի N 239 որոշմամբ սահմանված ընթացակարգին համապատասխան պահանջվում է կատարել ներկայացված նորմայի փորձաքննություն, ապա այն իրականացվում է հայտարարատուի միջոցների հաշվին:

6. «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքները «վերաարտահանում» մաքսային ռեժիմով հայտարարագրելիս՝ եթե առկա է սույն

կարգի 4-րդ կետով սահմանված եզրակացությունը, մաքսային մարմիններն ապրանքները բաց են թողնում լիազոր մարմնի կողմից տրված նոր եզրակացության հիման վրա:

7. Հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերի հիման վրա երկու աշխատանքային օրվա ընթացքում մաքսային մարմինները թույլատրում են ապրանքների ներմուծումը:

8. Հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերի թերի լինելու դեպքում մաքսային մարմինները դրա մասին հայտարարատուին տեղեկացնում են մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

9. Հայտարարատուն փաստաթղթերի թերի լինելու վերաբերյալ տեղեկացում ստանալու դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում կարող է համալրել դրանք:

10. Թույլտվություն ստանալու մասին դիմումը երկու աշխատանքային օրվա ընթացքում մաքսային մարմինների կողմից մերժվում է, եթե ներկայացված չի 2-րդ կետում նշված փաստաթղթերից որևէ մեկը: Մաքսային մարմինների կողմից վերամշակման նպատակով ապրանքների ներմուծման թույլտվության հիմնավորված մերժումը տրվում է գրավոր ձևով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
հոկտեմբերի 10-ի N 1288 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲՆԱԿԱՆ՝ ՄՇԱԿՎԱԾ ԿԱՄ ՉՄՇԱԿՎԱԾ, ԲԱՑՑ ՉՇՐՋԱՆԱԿՎԱԾ ԿԱՄ ՉԱՄՐԱՑՎԱԾ ԱԼՄԱՍՏՆԵՐԻ (ԱՏԳ ԱԱ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ 710210000, 710221000, 710231000) «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ՝ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ» ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է բնական՝ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների (ԱՏԳ ԱԱ ծածկագիրը՝ 710210000, 710221000, 710231000) ժամանակավոր արտահանման գործընթացը՝ «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով արտահանելիս մաքսային ձևակերպումների իրականացման պարզեցված կարգը:

2. Հայտարարատուն «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով արտահանման թույլտվություն ստանալու համար թղթային կամ էլեկտրոնային եղանակով մաքսային մարմին ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում.

2) պայմանագրի պատճենը.

3) լիազոր մարմնի տրամադրած՝ «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների նվազագույն քանակության վերաբերյալ եզրակացությունը՝ եթե վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքը չի բավարարում սույն որոշման 2-րդ կետի 2-ին ենթակետի համաձայն հաստատված վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի տոկոսին.

4) Քիմբերլի գործընթացի հավաստագիր:

3. Եթե կատարված տեսակավորման, գծանշման և զննման արդյունքում պարզվում է, որ վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի տոկոսը չի բավարարում սույն որոշման 2-րդ կետի 2-ին ենթակետին՝ համաձայն հաստատված վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքին, ապա հայտարարատուն լիազոր մարմին է ներկայացնում դիմում 1-ին կետում նշված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք նվազագույն արդյունքի եզրակացություն ստանալու համար:

4. Սույն կարգի 3-րդ կետի 3-րդ ենթակետում նշված եզրակացությունը լիազոր մարմնի կողմից տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 27-ի «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի նվազագույն քանակության սահմանման կարգը և «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքների վերամշակումից հետո ստացվելիք արդյունքի, ինչպես նաև վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների նվազագույն քանակության սահմանման կարգը հաստատելու մասին» N 239 որոշմամբ սահմանված ընթացակարգին համաձայն:

5. «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքները «վերաներմուծում» մաքսային ռեժիմով հայտարարագրելիս, եթե առկա է սույն կարգի 4-րդ կետով սահմանված եզրակացությունը, մաքսային մարմիններն ապրանքները բաց են թողնում լիազոր մարմնի կողմից տրված նոր եզրակացության հիման վրա:

6. Հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերի հիման վրա երկու աշխատանքային օրվա ընթացքում մաքսային մարմինները թույլատրում են ապրանքների ներմուծումը:

7. Հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերի թերի լինելու դեպքում մաքսային մարմինները դրա մասին հայտարարատուին տեղեկացնում են մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

8. Հայտարարատուն փաստաթղթերի թերի լինելու վերաբերյալ տեղեկացում ստանալու դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում կարող է համալրել դրանք:

9. Թույլտվություն ստանալու մասին դիմումը երկու աշխատանքային օրվա ընթացքում մաքսային մարմինների կողմից մերժվում է, եթե ներկայացված չի 2-րդ կետում նշված փաստաթղթերից որևէ մեկը: Մաքսային մարմինների կողմից վերամշակման նպատակով ապրանքների ներմուծման թույլտվության հիմնավորված մերժումը տրվում է գրավոր ձևով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ